ՇՏԿՈՒՄ N 1

«ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի միջնակարգ և ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցների կառուցման» ԱՄՄ № A-35AR/A-29KQ մրցութային փաստաթղթերի

Սույնով տեղեկացնում ենք, որ Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում իրականացվող «ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի միջնակարգ և ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցների կառուցման» № A-35AR/A-29KQ մրցույթի փաստաթղթերի Բաժին 3-ի «Գնահատման և որակավորման չափանիշները», 2.4 կետի «Շինարարական փորձ», 2.4.1 ենթակետի «Նման չափերի և բովանդակության պայմանագրեր» 1-ից 5-րդ հղումները պետք է կարդալ հետևյալ կերպ.

«[1] Նմանությունը որոշվում է հետևյալ կերպ՝ **երկաթբետոնե միաձույլ հիմնակմախքով քաղաքացիական շենքերի կառուցման կամ վերակառուցման պայմանագրեր,** իսկ Կառուցապատող շինարար հանդես գալու պարագայում՝ **երկաթբետոնե միաձույլ հիմնակմախքով քաղաքացիական շենքերի կառուցման կամ վերակառուցման աշխատանքներ**: Փոքր մակերեսով (պահանջով սահմանված մակերեսից փոքր մակերեսով) մի քանի պայմանագրերի մակերեսը ընդհանուր պահանջը բավարերլու համար չի թույլատրվում:

[2] Պայմանագիրն էապես ավարտված է, եթե իրականացվել է պայմանագրով նախատեսված աշխատանքների 80% տոկոսը կամ ավելին:

[3] Այն պայմանագրերում, որտեղ Մրցույթի մասնակիցը եղել է ՀԳ անդամ կամ ենթակապալառու, սույն պահանջի կատարումը որոշվում է միայն ընդհանուր մակերեսում մրցույթի մասնակցի կողմից կատարված մասով:

[4] ՀԳ-ի դեպքում անդամների կողմից ավարտված պայմանագրերի մակերեսը չպետք է գումարվի՝ առանձին պայմանագրի նվազագույն արժեքի պահանջի կատարումը որոշելու համար: Հակառակը՝ յուրաքանչյուր անդամի կողմից իրականացված յուրաքանչյուր պայմանագիր պետք է բավարարի առանձին պայմանագրի նվազագույն մակերեսին, որը պահանջվում է առանձին կազմակերպությունից: Որպեսզի որոշվի, թե արդյոք ՀԳ-ն համապատասխանում է պայմանագրերի ընդհանուր թվի պայմանին, պետք է գումարվեն միայն բոլոր անդամների կողմից իրականացված պայմանագրերը, որոնցից յուրաքանչյուրը պետք է լինի պահանջվող նվազագույն մակերեսին հավասար կամ դրանից ավել:

[5] Կառուցապատող շինարար է համարվում իր միջոցներով շինարարությունը նախաձեռնած և իրականացրած կազմակերպությունը: Կառուցապատող շինարարի կողմից ներկայացված նմանատիպ աշխատանքները պետք է լինեն ավարտված և շահագործման հանձնված՝ առաջարկների ներկայացման վերջնաժամկետի օրվա դրությամբ: Այն աշխատանքներում, որտեղ Կառուցապատող շինարարը եղել է ՀԳ անդամ կամ ունեցել է ենթակապալառու, սույն պահանջի կատարումը որոշվում է միայն ընդհանուր մակերեսում մրցույթի մասնակցի կողմից կատարված մասով:»

ՀՏՋՀ գնումների բաժին

27 հունվարի 2022թ.